



ՌՅԻՐ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

(Տես երես 321):

ԺԴ.

Կրօնական բանագնացութիւն ընդ Հռովմայ Եկեղեցւոյն. — Որոն Ֆրիդլինկայ ժամանակագիր. — Ս. Բեռնարդու. նմանութիւն ընդ Շնորհալոյ. — Հայկական զուգադիպութիւնք. — Վանք Հայոց 'ի Սալուստիան Զուրա Հռովմայ. — Խնդիրք Հայոց:

Քաղաքական շարժումներ և շփոթք դադարելիք չունենին, եկեղեցական խնդիրք ալ չէին պակսիր, մէկ մ'ի Յունաց կողմանէ մէկ մ'ի Լատինաց. հարկ սեպեցին մեր հայրապետքն՝ առաջին յարմար գտած միջոցին նուիրակութիւն մը խաւրել յարեմուտս, առ Ս. Քահանայապետն Հռովմայ. զրկեցին՝ որպէս երևի՝ 'ի դարնան 1144 տարւոյ, թէ և շատ ուշ հասան նուիրակքն իրենց դիտած տեղը: Սիօնի և Անտիոքայ ժողովքներէն ալ առաջ թղթակցութիւն և բանագնացութիւն եղած ըլլալն՝ Հռովմայ և Հայոց աթոռոց մէջ վկայուած է, թէ և վկայական գրուածք և թուղթքն չեն դադարի հիմայ. 'ի Սիս գրուած կաթողիկոսաց դաւադանադրութեան մէջ (յորմէ կ'առնու և Միսթար Ապարանեցի 'ի վերջ ԺԴ դարու) կ'ըսուի, թէ. «Առ սա (Գրիգորիս) հայրապետն «Հռովմայ գրեաց թուղթ, և խնդրեաց կատարել «զտօն Մենդեանն և Մկրտութեանն» ընդ մեծ «եկեղեցին Հռովմայ և ամենայն տիեզերք. և ար. «կանել ջուր 'ի սուրբ խորհուրդն: Յւ յետ սորա «Խննովկենախոս Պապն զնոյնս գրեաց և եցոյց «հարկաւոր»: Խննովկենախոսի նախորդն է Ունորիոս Բ Պապ, որ քահանայապետեց յամս

1124-30. Ըսել է որ այս միջոցին առաջին անգամ թղթակցութիւն եղած է այս կրօնական և ծիսական խնդրոյ վրայ, զոր առաջ և ետե ամէն Հռովմայ հայրապետք ալ առաջարկած են Հայոց. յետոյ զնոյն կրկներ է Խննովկենախոս Բ (1130-1143) հաւանորէն իր նախայիշեալ Աւագրիկ նուիրակին ձեռք, յամին 1141, ինչպէս նշանակէ մեծանուն վարդապետն Յսայի Նչեցի. «Նովենգիոս Պապն «Հռովմայ, որ էր 'ի հինգ հարիւր և յիննսուն «թուին Հայոց». և որ աւելի փափագելին էր մեղի, կ'աւելցընէ Յսայի թէ իր ատեն՝ յետ իբր 160 կամ քիչ մ'աւելի ամայ՝ «ունիմք այսօր «'ի միջն մերում՝ զԽնդիրն (Պապին) հանգերձ «Պատասխանական բանիւ», Գրիգորիսի և Ներսիսի. զոր մէք հիմայ գրողքս՝ դժբաղդաբար ոչ ունիմք: Այլ որչափ Յոսայեայ նշանակածէն գուշակուի՝ այս պատասխանին յառաջ գրուած է քան զնուիրակութիւնն Հայոց, և իմաստն ալ թուի բացատրութիւն մը Հայոց եկեղեցւոյն սովորութեան, թէ ինչո՞ւ այն երկու տօները՝ Մենդեան Գրիստոսի և Մկրտութեան՝ մէկ օր կը տօնեն. նոյնպէս ալ Բաժակին խնդիրը, որուն փոփոխութիւն ընեն ալ այնպիսի ժամանակ՝ յո-

րում Հայք զանազան տիրապետաց իշխանութեան և մէկմէկէ հեռու՝ ոչ միայն չէին կրնար ժողովի մէկ տեղ ի խորհուրդ, այլ գուցէ գրով և նուիրակով ալ դժար էր բան հասկըցընել, միաբանութիւնն՝ ընդարձակելու տեղ՝ գուցէ ներքին անմիաբանութիւն և կոխ կրնար պատճառել, ինչպէս քիչ մ'առաջ Ալթամարեցոց, և յետոյ Հաղբասեցոց գործեր և գրերն ալ վկայեն։ Այս բանիս համար էր որ Մեծ Վկայասէրն ալ նոյն թելագորութիւնն ընդունելով իր անուանակցէն, Գր. Է Պապէն, չէր կրցած նոր փոփոխութիւն մ'ընել։ Յոյնք ալ, ուրիշ խնդիրներէ զատ, այս բաներուս վրայ կը վիճէին ընդ Հայոց և կը ստիպէին. բայց որովհետեւ շատ աւելի հակառակութեամբ և ուրիշ պատճառներով, և իրենք ալ Հայոց խոյնդակն սովորութիւններ և ծէսեր ունէին, ոչ միայն չէին կրնար միաբանիլ, այլ և իրարու մերձադուրութեան պատճառաւ՝ մէջընդմիջ վէճն անպակաս էր։

Այս բանիս ալ ճար մ'ընելու, և Հռովմայ բարձրագոյն Թոմէն վկայութիւն և հեղինակութիւն մ'առնելու յոյս ալ կ'երևի Հայոց նուիրակութեան մէջ, գէթ ըստ բանից մէկ հատիկ Լատին ժամանակագիր և ականատես վկային այս դէպքիս. որ է Ուոն՝ Պաւլերայի Ֆրիզինկէն քաղաքին արքեպիսկոպոսն. արժանայարգ անձն թէ վարուք, թէ պատուով և թէ գիտութեամբ, որոց համար Մեծ մականուանի. Աւստրիոյ և Խոնելի սուրբ իշխանի մը (Լուդովիկոսի) որդի, ինքն ալ Ուոն՝ Երանելի անուանեալ, և բռնի (Վիստերսենայն) վանքէն հանուելով եպիսկոպոս Էսենադրուած (1138 + 1158)։ Իր ժամանակակցաց մէջ ամենէն աղէկ գրողն ալ կը սեպուի. գլխաւոր գործածն է Ժամանակագրութիւնն, սկսեալ ի հին դարուց՝ մինչև իր օրերը. և գրեթէ այս մեր կարեւոր գիտութեան յիշատակութեամբ կ'աւարտէ պատմութիւնը, այն ալ կիսկատար յիշատակութիւն մ'է. վասն զի նուիրակութեան հետեւանքն չի յիշուիր։

Արդ ըստ այսմ ականատես վկայի՝ Նուիրակքն Հայոց, որոց մէջ յիշէ եպիսկոպոս մը՝ առանց անուան և տեղւոյ, (որով զատ իր յիշած Գառուցացոց Աստրի եպիսկոպոսէն, զոր ոմանք նոյն Հայք կը կարծեն), յետ տարի ու կէս ճամբորդութեան եկան հասան ի Վիգերպոյ քաղաք ի տալիոյ, ուր գտուէր այն ատեն Պապն. ըսել է յայնայնի 1145 տարւոյն։ Այսչափ երկար ուղէ գնացութեան պատճառն չըսեր, և զարմանալի է. եթէ Նուիրակքն ուղէին ծովով երթալ՝ թուի թէ կրնային յԱնտիոք և ի Տրիպոլիս կամ յԱբքեա անցնիլ, կամ ի նաւահանգիստ Տարսուսի, և ոչ այնքան ուշ հասնիլ յիտալիա. այլ թուի թէ ցամաքային ճամբայ բռնած են նախ, գուցէ արեւելեան Հայ եպիսկոպոսաց հետ տեսնուելու համար. և թերեւ իրենցմէ վերջը ԺԳ և ԺԻ գաւրուն Լատին քարոզչաց և Նուիրակաց նման՝ հիւսիսային երկար ճամբան ընտրեր են, Վովկասէն և Վովկայի եղերքէն անցնելով, մանելով յԱրուպիա, ի թագաւորութիւնս քրիստոնէից, և անկից առաջ գալով մինչև ի Հռովմա ի Վիգերպոյ։ Եթէ արգարեա առջի տարւոյն գարնան ճամբայ ելած էին՝ կրնային գիտնալ Բ Իննովկենտեայ մահը (23 սեպտ. 1143), և կաթողիկոսին թուղթն

ուղղած կ'ըլլայ առ յաջորդ նորա, որ է Սեբ. Նիոս Գ, աշակերտ գերահռչակ Ս. Բեռնարդոսի, որ այն ատեն արեւմտեան եկեղեցւոյ արեգակն էր ինչպէս Ենորհայնի ալ Հայոց՝ յարեւել. և գուցէ չափազանցութիւն չըլլայ ըսելն, թէ այն ատեն եկեղեցւոյ մէջ ասոնք էին երկու ամենէն նշանաւոր անձինք, վարդապետութեամբ և որբութեամբ։

Եթէ պատմութիւննիս պարզ անպատուակ պատմութիւն չըլլար՝ կը փափագէի որ Հայոց Թոմէն եկած Եպիսկոպոս նուիրակն ինքնին Ս. Ներսէս ըլլար. այն ատեն անհրաժեշտ տեսաւ. րութիւն և գրկակցութիւն մ'ընել կու տայի այն երկու հոգեւոր հարազատաց, կամ հոգեծին թուտակաց, այն անմահ և իրերանման մաքրակն. ցաղ շնորհազարգ և մեղրածորան Վարդապետաց։ Այլ գարձեալ ասոնց այս գերագոյն նմանակցութիւնը և մերձադուրութիւնը՝ վիպասանութեան փափագածէն և պատմութեան ժխտածէն վեր կը դասեմ. և գրեթէ բռնագատիչ և անտնօրինի հարկ կը դրամ՝ հօս ընդհատելով մերոց նուիրակութիւնը՝ ներկայացընել պատմութեան մէջ այս մեծ կերպարանքը, Ս. Բեռնարդոս Լ. և ոչ այնքան իր անհաւասարելի մեծութեանը համար, որքան նուրբ նմանութեան մը ընդ Ներսիսի Նորհալոյ և խորհրդական յարաբերութեան մը ընդ Հայութեան. որպէս թէ Հայոց հովանաւոր հրեւտակն՝ ասոր սուրբ հոգին ալ երեւմի իր թեոյ տակ առած ըլլայ։ Ընթերցողս ալ, յուսամ, կարգարացընէ ըսածս՝ զարմանալի հանգիպութիւն. ներ տեսնելով. և ով ալ որ ընդհանուր եկեղեցւոյ պատմութիւն գիտէ՝ չի տարակուսիր զիեւ. նարգոս այն դարուն մէջ արեւմտեան եկեղեցւոյն հոգի տեսնել, զԵնորհայն՝ արեւելեան եկեղեցւոյ հրաշալի շունչ։ Աստուածային նախախնամութե զարմանահրաշ գործերէն մէկն է ասոնց նորթ. նակ զուգութիւնը. և պարտք է ճանչնալ և օրհնել զգործ Աստուծոյ։

Նոյն իսկ Բեռնարդոսի ծննդեան տեղն, Փանկաջ Ֆոնդէն գեղն Տիփոնի (Fontaine-les-Dijons) իրեն պաշտպան ունէր և ունի Ս. Աբրամոս մը, զոր աւանդութիւն տեղւոյն և ժամգիրք եկեղեցւոյն՝ ճանչնան Հայազգի եպիսկոպոս մը. և կ'ըսուի թէ ծնողքն Սարատաաց կամ Վրաց կողմերէն էին՝ հեթանոսութեան ժամանակ, և հայածանքէ փախչելով եկան ի Հայաստան, ընտկեցան յԱրտամէա (Վանայ մօտ)։ Հօս ծնաւ Սուրբն, և Սառլատուն (Սալնատուն, Սալոյ ձոր)։ Քաղաքի եպիսկոպոսին օգնական և յաջորդ եղաւ. յետոյ իր հայրենի երկիրը գնաց քարոզելու, ուր և նահատակեցաւ։ Ինչ կերպով և երբ իր նշխարքն և պաշտօնն փոխադրեցան ի Ֆոնդէն Փանկաց, յայտնի չէ։ Մանթեն այս է որ շատ ջերմեռանդ էր իր եկեղեցւոյ Սրբոյն, ուր ստեղծ նուէրքներ կ'ընծայէր, և որոյ բարեխոսութեան պատու համարէր իր Բեռնարդոս ալ Նուարգն ալ, (զի այսպէս կ'անուանէր իր կրտսեր

1 Արարացի և Եթովպացի լեզուա թարգմանած Ս. Հարց հին հաւաքածոյ գրոց մէջ գտուին և բանք Ս. Աբրամոս Հայ հայրապետի կամ եպիսկոպոսի մը, և Դարէն առաջ. այլ բուն ժամանակն, կամ վերոյիշեալ նահատակին հետ նոյն ըլլան և չըլլան յայտնի չէ։

որդեակն, Nivarde), ուրիշ զաւկերներն ալ. որք և ամենքն իրեն պէս յետոյ հրաժարելով յաշխարհէ՝ կրօնաւորեցան. ինչպէս նաև իրենց քորն (Հովնինա) նման մեր Ներսիսի քորը (Մարիամու), և ամենքն ալ ի գասս Սրբոց յիշատակուն: Բեռնարգ 10 տարի յառաջ քան զՆերսէս եկաւ յաշխարհ (1091) և 20 տարի անկէ առաջ վերափոխեցաւ (1153):

Գրիգորիոսի կաթողիկոսութեան տարին (1113) Բեռնարգոս ալ մտաւ Զրհոր ըստած վանքը (Cîteaux) կամ Կիստերսեան Բենեդիկտեանց ուխտը, և երկու տարիէն հազիւ 25 տարեկան՝ նոր վանքի մը շինող և հայր եղաւ, Պայծառաձոր կոչուած (Clairvaux), որ արգարե և իր բնակութեամբն և կարգերովն մեծապէս պայծառացաւ և հռչակեցաւ: Երբ ի Իննովկենտեայ քահանայ յապետութեան սկիզբը հերձուած ծագեցաւ Ա. նահկեպի հակաթուութեամբ և ժողով մ'եղաւ ի Բիզայ քաղաքի, Ս. Բեռնարգոս երեք չորս տարի աշխատեցաւ քարոզելով և յորդորելով աշխարհէ աշխարհք քաղաք քաղաք, և շատերը թէ առանձնական մարդիկ թէ ամբողջ հասարակութիւններ և պետութիւններ՝ հաւանեցուց օրինաւոր Պապին. իր սրտաբուրդն և հոգեբուրդն խօսքին ոչ ոք կրնար ընդգիմանալ կամ չյաղթուիլ: Վասն զի էր միանգամայն քաղցր և հզօր, գիտուն և շահիչ, կրակոտ և ոչ այրող, և թէ այրէր՝ զմոլութիւնս և զմոլորութիւնս, այլ ոչ զանձինս, որով շահէր և զմոլորեայս. յորոց աշխարհահռչակ եղած է գիպուածն Ապելարի, Եւլիսայ սիրահարին, որոց երկրաւոր սէրը յԱստուած դարձնելով անմահացուց. մինչդեռ Գրիգորիոս և Ներսէս Ասորոց և Հայոց վէճերը և խնդիրները կը հանգարտեցնէին բանիւ և գրով: Արեւմտեան վէճերը հանգարտեւն էտե՝ Բեռնարգոս գնաց ի Հռովմ (1140) յուխտ. ուր Իննովկենտիոս Պապն իրեն յանձնեց հին վանք մը Բենեդիկտեանց, կարգաւորելու և շէնցընելու: Այս վանքս քաղքին սովորական շրջանակէն դուրս է, և Ս. Պողոս առաքելոյ նահատակութեան տեղը, որ ի հնուց ի վեր Սալուեան Զուրք կ'ըսուի, նաև Երեք-Աղբերք, որք ըստ աւանդութեան բարեպաշտից բղխած են Ս. Պողոսի գլխոյն կարուելէն ետքը իրեք անգամ թաւալած կամ ցատքած տեղերը. առջի դարերէն սկսեալ քրիստոնէայք այն կողմերը շատ մեծ ու փոքր եկեղեցիներ և յետոյ վանքեր ալ շիներ էին, որոցմէ մէկն ալ կարծուի Հայոց վանք՝ Ս. Հռենատոսի անուամբ յիշուած յիշ գարու: Ս. Բեռնարգոսի տրուած վանքն՝ յանուն իր եկեղեցւոյն՝ կոչուէր և կոչուի Ս. Անաստաս և Ս. Վինգենտ, մօտ յԵրիս Աղբերան. որոց մօտիկ է և Ս. Աստուածածնի եկեղեցեակ մ'ալ. ուր օր մը Ս. Բեռնարգոս պատարագելու ատեն տեսիլք մը տեսաւ, իբրու թէ լուսեղէն սանդուղ մը կար սեղանէն ինչուան յերկինս, որով քաւեալ ննջեցելոց հոգիք կը վերանային. և այնու յիշատակաւ մինչև ցայժմ կոչի տեղին (Scala Coeli) Սանդուղք Երկնից: Ս. Բեռնարգոս այն վանքը քիչ մը կարգաւորելէն ետեւ շուտով դարձաւ, և իրեն տեղ խաւրեց իր համանուն և սրբակրօն աշակերտը՝ Բեռնարգոս Բիզացին, որ ըստ ոչ կարծեաց վարդապետին՝ յետ մահուան Իննովկենտեայ և իր երկու կարճակեաց յաջոր-

դաց (Կէլեսափնոս Բ և Լուկիոս Բ) Պապ ընտրեցաւ (27 փետր. 1145) և կոչեցաւ Եւգենիոս Գ. առ որ իր Ս. և մեծ վարդապետն խրատական գիրք մը գրեց, անոր ծայրագոյն պաշտօնը զգուշութեամբ կատարել տալու համար: Այս երկու (Բեռնարգոս) վանահարց Ս. Անաստաս գտուած ատեն՝ արգեօք Հայք ալ վանք ունէին հօն, և արգեօք Եւգենիոս նախ հօն տեսած էր այս մեր արեւելեան ազգայինքը՝ իրենց հայրենի լեզուաւ և ծիսիւ՝ իրեն միանձանց հետ երբեմն սղօթակցելու Ս. Պողոսի ուխտատեղիները: — Յայտնին այս է, որ մեր օրերս քիչ տարի առաջ (1869) յիշեալ Ս. Անաստաս եկեղեցւոյն յատակը նորոգել պէտք եղաւ, խոնաւութիւնը ցամքեցընելու համար, և աստիճանները քակելու ատեն՝ տակէն ելած քարերուն մէջ գտուեցան երկուք մ'ալ հայերէն արձանագրութեամբ, մէկն ԶԺԶ (1267) թուականաւ, միւսն գեղեցիկ խաչվէժ մը՝ ԶԾԴ (1305) թուականաւ և յատակ արձանագրութեամբ, ի յիշատակ հանգուցեալ Վարդան Ճգնողի մը, որուն միաբանքն ալ կը յիշուին հօն՝ ի Գլխափան Վան (Հայոց). շատ տարիներով և դարով առաջ հնագոյն հայ խաչ արձան մ'ալ գտուէր էր ՈՂԵ (1246) թուականաւ, որ հիմայ Հռովմայ Լատերանեան թանգարանը դրուած է. անկէ քանի մը տարի թաւալ ալ գրուած գիրք կայ ի Հռովմ (1240), յանուն Ստեփանոսի քահանայի, որ կը յիշուին նաև ՈՂԵ և ԶԺԶ թուոց արձանաց մէջ ալ. և Ս. Բեռնարգոսի հօն այցելութենէն միայն դար մը ետեւ ըլլալով, միանգամայն և հնագոյն քան զամենայն եկեղեցեաց և վանաց Հայոց յիտալիա, կրնայ կարծուիլ թէ երկու Բեռնարգոսից հօս գտուած ատեն ալ ըլլային իրենց գրակից և ուխտակից Հայ միանձնիք. և յառաջ քան զնուիրակութիւն Գրիգորիոսեանց՝ Պայծառաձորոյ հիմնադիրն և Անաստասայ արքայն՝ իբրեւ բոլոր Հայոցութեան նուիրակ տեսեր էին մեր հեռաշխարհիկ ուխտաւորները:

Դառնանք հիմայ մեր բուն պատմութեան և խնդրոյն: Նուիրակքն Հայոց անշուշտ զՊապն կարծէին գտնել ի Հռովմ, բայց այս տեղ քաղաքական շփոթութեանց կասկած ըլլալով նորրին ծայր Պապն՝ որ շտապաւ ընտրուած էր, շտապաւ մ'ալ և լուեւայն հեռացաւ անկէ, ուրիշ վանքի մը մէջ ձեռնագրութիւն և հովուապետական գաւազանն առաւ, ու գնաց նստաւ ի Վիդերպոյ, Հռովմայ և Դոսկանայի սահմանաց միջոց հին քաղաքը: Հօս մեր նուիրակներն գտան զՍ. Քահանայապետը, և կատարեցին իրենց յանձնուածը: Բերած և տարած թուղթերնին հիմայ չգտուելով ստոյգ չիմացուիր թէ գլխաւորապէս ինչ բանի համար էր, և ինչ հետեանք ունեցաւ: Ժամաւ նակագիր պատմին Ոթոն՝ որ ներկայ ալ էր, և տեսաւ և խօսեցաւ Նուիրակաց հետ, որոշ և բաւական տեղեկութիւն մը չիտար. մանաւանդ թէ շփոթութիւն կայ ըսածին մէջ, ինչպէս նաև մեծաբանութիւն, որ կամ նուիրակաց կողմէն մը տած է, կամ գրչագրաց այլալարութենէն: Վասն զի նախ Աթոքիկոսին համար կ'ըսէ թէ « այսպէս կոչուի վասն զի անթիւ, այսինքն հաւաքէն աւելի (!) եպիսկոպոս ունի իր իշխանութեան տակ »: Իսկ նուիրակութեան գլխաւոր պատճառն՝ անոնցմէ ըսածին համեմատ՝ էր Յու-

նայ և Հայոց վէճն, մանաւանդ պատարագի վրայ. Յոյնք՝ Հայոց անապակ բաժակը կը մեղադրեն, Հայք՝ անոնց խմորուն հացը¹: Երկրորդ վեճի առիթն էր Մինդեան և Մկրտումեան տոնից միութիւնն կամ զատութիւնն. ասոնցմէ դուրս ուրիշ խնդիրներ ալ ունէին, կ'ըսէ. և եկեր էին Հռոմայ Քաջանայապետը դատաւոր բռնելով իրմէ հրահանգ մ'առնուլ պատարագի արարողութեանց վրայ: Իսկ Ս. Պապն քաղցրութեամբ լսելով անոնց, փոխանակ վարդապետութեան՝ ըսաւ, որ իրենց իրենցմէ գիտեն Լատինաց թէ թիւ և թէ ձայնաւոր հանդիսական պատարագ մատուցանելը, և իմանան ծիսից տարբերութիւնը կամ նմանութիւնը: Տօնական օր մ'ալ (Ս. Պետրոսի եկեղեցւոյն նաւակատեայ, (յ'18 նոյեմբերի) ինքն Պապն կը պատարագէր. մեր նուիրակքն ալ ուշի ուշով կը գիտէին. մէջերնէն եպիսկոպոս մը յանկարծ տեսաւ Պապին գլխուն վերեւ արեւու պէս պայծառ լոյս մը, մէջն ալ երկու աղաւնի որ կ'եւէ նէին կ'իջնէին: Զորս գին դարձաւ զննելու թէ արդեօք պատուհանէ մը էր ծագած լոյսն, կամ աղաւնիքն եկած, սակայն յարմար բան մը չտեսնելով համազուեցաւ որ հրաշալի երեւոյթ մ'էր, և նշան ուզողութեան Հռովմէական եկեղեցւոյ. զոր և աներկբայաբար ընդունելով՝ ամենուռն պատմեց տեսածը, և հանդիսական ժողովի մէջ ալ ըզնոյն վկայեց: Իսկ Ս. Պապն աղոնական խոնարհամտութեամբ ըսաւ, թէ տեսածն իր արժանաւորութեանը համար չէր, այլ տեսնողին հաւատքին, որով Աստուած ուզեր է յայտնել ճշմարտութիւնը, որպէս զի ինքնին ընտրեն Նուիրակքն ինչ որ պէտք է ընդունիլ և իմացընել զիրենց զօր կողմերուն:

Երրորդ պատճառ կամ խնդիր նուիրակութեան՝ տարօրինակ կամ նորալուր բան մը կ'աւանդէ Ոթոն. յիշեալ եպիսկոպոսն՝ որ նուիրակաց գլուխ կը յայտնուի, պատմեց, որ իրենց Հայոց սահմանակից հեթանոս ազգ մը կար, որոց զաւակներն հոտած և գարշելի կը ծնանէին, և ինչուան որ Հայոց մկրտել չտային՝ չէին աղատիր այդ պատուհասէն. բայց երբ մեծնային՝ իրենց ծնողաց ծուռ ուղանգով կ'ապրէին: Հիմայ Հայք խիղճ ընելով թէ արդեօք օրինաւոր է մկրտել զանոնք՝ զր հաւանորէն յետոյ հեթանոսաբար պիտի ապրին, և չկարենալով ինքնին որոշել այս յիշաւի ծանր խնդիրը՝ Հռովմայ աթոռոյն վճռին կը սպասէին: Արդարեւ ոչ միայն եկեղեցական՝ այլ և պատմական հետաքննութեան արժանի բան մ'է գիտնալն թէ ինչ ժողովուրդ էր այդ սահմանակիցն Հայոց, արդեօք Տաւրոսի խորշերուն մէջ մնացած հեթանոս յունական ցեղ մը, թէ՛ (որ աւելի հաւանական կ'երևի) Թուրքաց ցեղ մը, ինչպէս կըրնային ըլլալ Իկոնիոնի Սուլտանին հպատակներէն ոմանք, որոց վախէն Հայք չէին համարձակեր մերժել անոնց խնդիրը և գարշահոտ ծնունդները մկրտելով անուշահոտ կ'ընէին: Դնորհալին իր Ընդհանրականին մէջ կը խօսի այս Թուրքաց երախայից մկրտութեան վրայօք, ինչպէս պիտի յիշենք իր տեղը: Պատմիչն ասկէ աւելի բան չըսեր. և ոչ ալ քաջանայապետին վճի-

¹ Ոթոն, կամ իր հիմայ հրատարակուած գործն յայտնի սխալ կ'ըսէ թէ Հայք ալ Յունաց պէս խմորուն հացով կը պատարագէին:

որ այս բանին վրայօք. որ հիմայ ալ կըրնայ աստուածաբանական խնդիր կամ դէպք (casus) մ'ըլլալ:

Աւելի փափագէինք որ առջի խնդրոյն վրայօք եղած և որոշուածն յիշած ըլլար Ոթոն. որ թուի թէ ինչուան վերջը ներկայ չգտուելով նուիրակաց հօն եղած ատեն, գործոյն վերջը չէ տեսած և լսած. այլ սկիզբը կ'ըսէ, թէ Նուիրակքն Հայոց եկեղեցւոյն Ուխտին կողմանէ ամենայն հպատակութիւն մատուցին Ս. Պապին: Պատմիչն արժանաւոր հաւատարմութեանը վրայ տարակոտ չունիմ, այլ նուիրակքն անծանօթ ըլլալով կըրնան աւելի պակաս տարակուսելի ըլլալ իրենց կողմանէ մէջ բերուածները. Հայոց հաղաւոր եպիսկոպոսները, ամենակերպ հպատակութիւնը, և եպիսկոպոսին տեսիլքը. միով բանիւ, ըզնոյնս յաղթահարելու կամ լռեցնելու համար՝ Լատինաց աւելի բան մը չնորհած կ'երևին, որուն յայտնի նշան չիգտուիր¹: Իսկ Ս. Քաջանայապետին կողմանէ՝ Իննովկենտիոսի Բ և Գրիգորի է գրածին համեմատ կոնգակ մ'ալ արուելն՝ վիս. յուած է այս թուականէս երկու գար ետեւ Միթթար կաթողիկոսի ատեն եղած Սոյ ժողովէն. որոյ ըսածն՝ թէ բաժակի և տօնից² խնդրոյն վրայօք սուրբ Հարց վկայութիւնները « գտցես » ի թուղթն Եւգինէոսի Պապին Հռովմայ, զոր զը. « բեալ է առ Տէր Գրիգորիս կաթողիկոս՝ եղբայր » մեծին Ներսիս ի Վայեցւոյ », կ'իմացընէ ալ թէ ոճով և երկար գրուած թուղթ էր, և թերեւ առկէ առեր էր Գրիգոր Անաւարդեցի կաթողիկոսն իր առ Հեթում Բ գրածները: Այս թուղթէն՝ և ընծաներէն զատ, ինչպէս էին գաւազան և քոջ կամ գլխի թագ առ կաթողիկոսն, անշուշտ և առ գործակից հարազատն Ներսէս³, շատ հաւանա-

¹ Թէ ոչ այս դէպքս՝ նոյն ժամանակի ուրիշ դէպք մ'ալ կատարած մը կու տան Հայոց վրայ՝ հնարագիտութեան, թէ և աւելի յօտարաց հնարաւ թուին: Նոյն ժամանակաշրջանն Ոթոն կը պատմէ իր ուրիշ գրուածի մը մէջ (Պատմութիւն գործոց Ա. Փրեստիկոսի կայսեր), որ Բիթլիէ ճիշդ այս Հայոց նուիրակութեան տարիները, յորում և խաչակիր զօրք հանելու հրահրք եղան, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը վերջը, մարգարէական գրուած մը հրատարակեցաւ այն ատեն տիրող Փառնկաց լուսավիթ ի թագաւորին վրայօք. իբր թէ Կիւրոսի պէս պիտի տիրէ Բարեւոյնի և արեւելից. իր վարդապոսն գրօնէրն պիտի թաշէին ինչուան Հերակլեայ գործոց տեղերը, և պիտի բացուէր իրեն գուռն Բ... և ուրիշ իրթին և անիմանալի խօսքեր. զոր մեծ յարգութեամբ կ'ընչուէին Փառնկէ նաև բարեպաշտ անձինք. և ոմանք կարծէին թէ Սիբիլական գրոց մէջ գտուած է, ոմանք ալ թէ Աստուած յայտնեց է Հայու մը. Cuidam Armenio divinitus revelatum affirmaretur: Մեր մէջ Ագապոսի, Մեթոսիոսի և Մեծին Ներսիսի անուամբ գուշակական գրուածք կան, աւելի աշխարհիս վերջի ժամանակին վրայօք. արդեօք ատենց մէջն է Ոթոնի յիշած յայտնութիւնն առ Հայք, թէ բոլորովին այլ ինչ, աւելորդ համարիմ քննել, անստոյգ և անպիտան համարելով:

² Արեւայ ըլլալ որ զօրութեամբ այս Կոնգակն Գրիգորիս ուզած ըլլայ տօնից աւուրց յարմարութիւն մ'ընել, գտնէ Աւետեաց տօնը որդակի և հանդիսի տօնել. և անոր համար յօրինած ըլլայ խորհուրդն անձաւ շարժականը:

³ Լամբրոնացի Ս. Ներսիսի վարուց վկայատառութեան մէջ կ'ըսէ,

« Մեծն ի Հռոմ լուրն հասեալ
Աս հայրապետն որ անդ նշտեալ.
Նա գաւազան և քոջ յղեալ,
Գրքով ըզտէրն պահանջեալ ».

սակայն ետեւի բաժնէն կ'երևի որ այս բանն Եւգենիոսն առաջ պապ մ'ըրած է. ինքն ալ անշուշտ առանց ընծայի չէ գարնուցած կաթողիկոսին նուիրակները:

կան է որ նուիրակքն աղէկ մը քննելով Հռոմայ մեծ եկեղեցւոյն ծէսերը, զոր հօն աւելի կատարեալ և անկասկած կըրնային դիտել քան Անտիոքայ և Նգեսիոյ կողմերը, հետեւնին բերած ըլլան նաև ծիսական գրքեր. և անկէ պատճառած ըլլայ մեր Մաշտոցի Զեռնագրութեանց կարգին փոփոխութիւնը և ընդարձակութիւնը. ինչպէս վերոյիշեալ Մխիթար կաթողիկոս գրելով առ Ալեմէս Զ (1343) որոշակի կ'ըսէ թէ ասկէ 200 տարի առաջ ընդունեցան Հայք 'ի Լատինաց Զեռնագրութեան նոր կարգը. և ուրիշ մ'ալ աւելի որոշակի, թէ Նպիսկոպոսի և քահանայի օծումը՝ զոր Հայք չունէին՝ Յունաց պէս, ընդունեցան 'ի Լատինաց Ներսիսի Ալայեցւոյ ատեն. և հօս ալ 200 տարի առաջ ըսելով, ճիշդ մեր հիմայ տեսած նուիրակութեան ատեն կը հանգիսի. և այս կարգաց հայերէն յարգարմունքն ալ մասամբ մեր Շնորհալոյ գրչին։ Այնպիսի ձեռքէ մ'անցած չըլլար՝ գուցէ այնպէս ընդհանուր Հայաստանեայ ընդունելի ալ չէին ըլլար այս կարգքս, որք Լատին և Հայ եկեղեցեաց միաբանութեան գեղեցկագոյն պատուաւոր կամ պտուղ մը կըրնան սեպուել։ Այնպիսի խոհական և աստուածաբեալ Հայրապետաց Զանքով՝ ծիսիւ և լեզուաւ օտար եկեղեցեաց յարմարութիւնք և միաբանութիւնք աւելի դիւրաւ կը յաջողէին քան քանի մը դար ետքը, երբ քաղաքական փոփոխամբք ալ հեղինակութեանց զուգակշռութիւնն շատ այլայլեցաւ. Հայոց տէրութիւնն տկարացեալ, ազգն զանազան իշխանութեանց և ազգեցութեց տակ ջրուեալ, որով կաթողիկոսական իշխանութիւնն ալ նուազեալ. իսկ Աւինիոնի Պապից հեղինակութիւնն, մանաւանդ մեր ընտանի և օտար ամբաստանողաց փշմամբ, շատ զօրացեալ. սրտից ազատ սիրոյ հաղորդակցութիւնն կ'ամփոփուէր, և աստակ առնակ կերպարանքներ կ'առնուէր։ Այնպիսի ատեն կշռոց յոյժ վերացեալ կամ մղեալ կողմն՝ ծանր հարկեր ալ կըրնար դնել կամ պահանջել 'ի խոնարհելոյն, ինչուան ուզէ որ, զատ յայլոց, Հայոց եկեղեցւոյ Զեռնագրութեան նոր կարգերն ալ նորէն թարգմանուելով՝ քննուին. և Մխիթար կաթողիկոս թէ հին և թէ նոր քահանայական և եպիսկոպոսական ձեռնագրութեանց կարգերը լատիներէն թարգմանել տալով (Պեմունդ անուամբ կոմսի մը) խաւրեց խնդրողին։ Ո՛ր և է միաբանութիւն այն ատեն սերտիւ և սրտով կ'ըլլայ, երբ երկու կողմէն ալ ըստ կարելոյն հաւասարութիւն կամ չափաւորութիւն մ'ըլլայ. զի ինչուան որ երկու թաթքն ալ գծի մը վրայ չգիշանին՝ կշիռքն չի հանգչիր։ Վերակայութիւն և ստորակարգութիւն՝ անհաւասարելիք կ'երևին ախմարաց. այլ սէր և խոնարհութիւն բարձրն ու ցածը կը հաւասարեն, միաբանեն, միացնեն։

Ասկէ աւելի յայտագիր մը չունենալով մեր նուիրակաց ըսածին և լսածին, և ոչ իրենց գործին ճամբուն, կամ մեր հայրապետաց ըրածին և գրածին, գառնաք մեծ քաղաքական տեսարանի մը, զոր և ոմանք կերպով մը կը կապեն այս նուիրակութեան հետ. և կ'ըսեն թէ ասոր մէկ վախճանն ալ էր 'ի քրիստոնէից օգնութիւն խնդրել ընդդէմ թուրքաց, որ է ըսել թագակիր զօրք յաբուցանել, յետ տիրելոյ նոցա Նգեսիոյ քաղա-

քին։ Սակայն սխալ է այդ կարծիքը. որովհետև մեր նուիրակաց ճամբայ ելնէն շատ ժամանակ վերջը հանդիպած է Նգեսիոյ առումն. և Ոթոն յայտնապէս կ'ըսէ թէ Ասորոց Գաբալայ¹ թէմն եպիսկոպոսն էր այս բանիս խնդիր ընողն, 'ի կողմնէ Անտիոքայ պատրիարքին ու բրնձին, և ասոր մօրը՝ որ Նրուսաղեմի թագաւորին գուստր էր, և ուրիշ Լատին իշխանաց. յայտ է ուրեմն որ ինքն ներկայ 1143 տարւոյն մէջ ճամբայ ելեր է, մինչքեռ Հայք 'ի գարնան նախընթաց տարւոյն, որուն վերջը հանդիպեցաւ Նգեսիոյ արկածն, զոր իրենք ալ հօս Պապին քով լսած պիտի ըլլան. թերևս այն ատեն իրենք ալ աւելցուցած ըլլան իրենց կողմերուն տաղնապեալ վիճակը յայտնելու։ Արդ որովհետև այս գիպուածն աւելի մեծ գիպուածի մը պատճառ եղաւ, որ զարմանալը նորէն գրգեց յարեւել գիմելու, միանգամայն և մեր պատմութեան նոր յիշեալ գլխաւոր անձանց, մանաւանդ Բեռնարդոսի և Շնորհալոյ, մէկմէկ կերպ գործելու և գրելու առիթ եղաւ, արժան է որ զանոնք յիշենք։

ԺԵ.

Վրէժխնայրոյն ժողովի և Պաշտիկի. — Ման տորա և Գերեզմանական ողբ Բարսղի վարդապետի. — Եղեսիոյ առումն 'ի Թուրքաց. — Բ. Խաչակիրք քարոզորհամբ Ս. Բեռնարդոսի. — Ողբք Շնորհալոյ յԵղեսիա։

Միջագետաց և հիւսիսային Ասորոց՝ թէ ոչ ամենէն մեծ և հզօր, գոնէ ամենէն աղնիւ քաղաքն կըրնայ ըսուել Նգեսիա, այսպէս կոչուած Անտիոքոս Սելեւկոսի՝ իր նորոգ շինողին ատեն, անուամբ անոր կնկանը, յետոյ Առհա անուանեալ իր յատուկ իշխողի մ'անուամբ, զոր՝ ոմանք Հայ ոմանք Ասորի համարին։ Այլ իր մեծագոյն շէնքն և շնորհքն առաւ Քրիստոսի տնօրէնութեց ատեն հօն թագաւորող Աբգարէն, զոր նոյնպէս Հայք և Ասորիք իրենց սեփականեն. և պատճառաւ գերահազակ Դաստառակին Քրիստոսի՝ սրբազան քաղաք և ուխտատեղի մ'եղաւ քրիստոնէից. և համարուէր 'ի տեղացեաց՝ թէ քաղաքն անառիկ պիտի ըլլայ 'ի թշնամեաց, ըստ գրաւոր խոստման Քրիստոսի առ Աբգար. սակայն ոչ թէ միայն այն գիրն երկբայական է, այլ և անոր հին օրինակաց մէջ այգպիսի խոստումն չկայ։ Յունաց և Պարսից պատերազմաց ատեն 'ի Զ դարու, և յետոյ Արաբացւոց բռնակալութեան ատեն՝ շատ գիպուածներէ անցաւ Նգեսիա, զոր երբեմն սառնորի գետնաժածք ալ աւրըշտրկեցին. Ժ դարու մէջ կայսերք յարմար առիթ մը գտնելով՝ Դաստառակը իրենց մայրաքաղաքը ձգեցին, ուսկից 'ի ԺԴ դարու փոխադրեցաւ. և պահի հիմայ 'ի Ճենովա քաղաքի Իտալիոյ։ Նգեսիա այսպէս իր ցանկալի գանձը կորուսած՝ բոլորովին երեսէ չընկաւ, այլ գեռ այն կողմերուն գլխաւոր քա-

¹ Gabulensis ըստ Ոթոնի, Հալէպի կողմերը քաղաք մը, որ Թուրքարէն ալ ձապուլ կոչուի։

զաբաց մէկն ճանաչուէր Արաբացւոց և Թուրքաց իշխանութեան աստէն. մինչև որ Ա խաչակիրք ժԱ զարուհ վերջը գիմելով յԵրուսաղէմ, նախ քան զայլ՝ տիրեցին այս քաղաքիս, որ Հայ քաղաքապետի մը (Թորոսի) պահպանութեամբ ազատ մնացեր էր Թուրքաց տերութենէն: Երբ խաչակիրք մօտեցան, անոնց մեծ առաջնորդին Կոփրեստոսի եղբայրն՝ Պալաինն՝ առաջ անցնելով այս կողմերս եկաւ. Եղեսայիք հրաւիրեցին զինքը, և Թորոս ոչ միայն սիրով ընդունեցաւ՝ այլ և իրեն որդեգրեց զՊալաինն և ժառանգ անուանեց. սակայն Թուրի Թէ ժառանգութեան փափաքն չարաչար փութալով՝ Թորոսի սպանման պատճառ եղաւ, և Եղեսայի այնուհետև մնաց Փռանկաց ձեռք. որք երբ Անտիոքայ և Երուսաղէմի ալ տիրեցին, զԵղեսայի առանձնակ իշխանութիւն մը կարգեցին կոմսութե պատուանուամբ: Երբ Պալաին Երուսաղէմի Թագաւոր եղաւ՝ զԵղեսայի Թողուց իր համանուն խնամոյն (Baudouin de Bourg). ուսկից ժառանգեց մաս մ'իր որդին, մաս մ'ալ քաջ իշխանն ճոսլին կամ Ժոսլէն (Joslin de Courtenay), որ խնամեցեր էր մեր Ռուբինեանց, առնելով կին զգուստր տարաբաղդին Լէոնի Ա, և վախճանէր էր յամի 1131: Իր կալուածքն Եղեսայի և Անտիոքայ երկու իշխանութեանց միասնահման էր, անոնց հիւսիսային առեմտեան կողմն և իր անուամբ Երկիր ճոսլինի կ'ըսուէր. հօս էր ահա Մովսէս գղեական ալ ի Տըուք գաւառի, ուր մեր կաթողիկոսն և իր Ենորհալի եղբայրն կը նստէին: ճոսլինի յաջորդեց իր համանուն որդին Բ ճոսլին, որ հօրը և մայրենի պապուն քաջութենէն մաս մը միայն ունէր, իսկ ըզգօնութենէն շատ փոքրիկ մասն. այլ առջի տարիները յաջորդելով Եղեսայի կոմսութիւնն ալ ժառանգեց, և երբեմն Գող Վասլի տիրած երկիրները Թողուց իրեն պէս տաքաղուիս կտրելի մը, որ էր Պալաին, եղբայր Անտիոքայ Ռեմունդ բրնձին: Այս երեքն ալ քիչ շատ իրարու նման, զեղծ մեղծ բարքով, երբեմն բարեկամ և երբեմն թըշնամի իրարու, Փռանկաց համբաւն և ոյժը նուաւ տացուցին Յունաց կայսերաց և Թուրքաց սուլտանաց և ամիրայից առջև, որք քիչ քիչ ասոնց սահմանները կոխեցին և կտրեցին. մինչև հարկ եղաւ որ Ռեմունդ Բրնձն երթայ ի Կ. Պօլիս և Մանուէլ կայսեր հպատակութիւն երգնու: Ասոր համար կ'ըսէ մեր ժամանակակից Պատմիչն (Գրիգոր Երեց), Թէ « էր ի տիս մանկութե, այր հօր « և ուժեղ, այլ ոչ խելայիմաստ ». և յետեւ Թէ ասոր և Թէ իր ընկերաց յարմար՝ կոչէ « անգլուխ « եղբայր Պաղտոյնին. որք ըստ ամբարտաւանութեան իւրեանց՝ անձնահաճութեամբ կամեցան « պատերազմել ընդ Թշնամոյն, և ոչ հաւանեցան « ցան միաբանել ընդ զօրս քրիստոնէից. որ ոչ « միայն ինքեանք կորեան և բարձան ի միջոյ՝ այն « պիտի գլխաւորք, (այլ և) բազումք ի քրիստոնէ « նէից »:

Արդ այսպիսի անգլուխ գլխաւորաց Փռանկ իշխանաց ատէն՝ հեռուէն զիրենք չընկալաւոր Թուրք իշխանք կըրնային յուսալ իրենց 50 տարուան վեր կորուսած երկիրները գրաւելու. բաւական ճանչցեր էին Փռանկաց ոյժը և պատերազմելու կերպերը, և հիմակուան վիճակին այս անտուրիկ երիտասարդաց ձեռքը: Ամենէն արթուն

և ազաճ գիտող, միանգամայն և ամենէն մերձաւոր և զօրաւոր այլազգի իշխանն էր Էմատէտտին Չանկի ամիրայն, Հալէպու տիրող որդին, որ առջի խաչակրաց հետ կռուող Թուրք զօրավարաց բանակը վարժած՝ իր հօրը յաջորդէն ետեւ, խալիֆայից ալ ծառայութիւն ընելով՝ անոնցմէ նոր պատիւներ և երկիրներ ընդունէր էր և աւելի ընդարձակեց իր զէնքերովը, Պասրայէն ինչուան ի Հալէպ, տիրելով նաև Մօսլայ իշխանութեան. Հալէպէն ալ անգին Համայ և Եմեսիոյ և չընկալից, ըսել է գրեթէ բոլոր Միջագետաց և Ասորուոց. և անմիջապէս Լատինացւոց սահմաններուն վրայ, որոնցմէ ալ մաս մը գրաւեց: Այլ մեծագոյն պատասի մը կը սպասէր, երկար ատենէ աչքը դրած Եղեսայի վրայ: Հիմայ իմանալով որ անգլուխն ճոսլին հեռացեր է անկից, բաւական պահապան չթողլով, ու Եփրատ գետէն անգին գացեր է իր զօրսանաց տեղուանքը, (հետեւ ալ տանելով մէկ Եղեսայի ազնուական Հայու մը յափշտակած աղջիկ), սկսաւ Չանկի իր բանակը քաղցընել. բայց աղէկ մը խաբելու համար զճոսլին՝ հեռու ճամբայ մը բռնեց, որպէս Թէ Ամգայ կողմերը երթալ կ'ուզէ. և յանկարծ երեսը գարձնելով շուտ շուտ քիչ փութացուց զօրքերը, հասաւ պաշարեց զԵղեսայ: ճոսլին ուշ արթնցաւ. կորցաւ հնարք գտնել իր քաղաքը մտնելու, բայց չկարցաւ օգնութիւն բերելու, ոչ ի Թագաւորէն Երուսաղէմի և ոչ յԱնտիոքացոյն. ամնոյ մը չափ քաղաքացիք ամենայն ձգգամբ և չարակրութեամբ գիմացան, անգագար նետով և քարով զարնելով զայլազգիս իրենց պարսպաց վրայէն. այլ Չանկի ալ անգագար այն պարսպաց հիմերը քանդել կու տար. և երբ փլցնելու մօտ էր՝ իմացուց քրիստոնէից վտանգը, որ անձնատուր ըլլան. և երբ չեղան՝ զօրացը խոստացաւ քաղաքը աւարառութեան մասնել: Այս յուսով ոմանք փլուցին պարսպին մասը, ոմանք գործ իքնելով ալ վրան ելան. ոմանք ալ կ'ըսեն, Թէ ճոսլինի յափշտակեալ աղջկան հայրն՝ իր աշտարակը թողլով՝ ճամբայ բացաւ: Դեկտեմբեր ամսոյ 23-ն էր, շաբաթ օր մը (1144) մուծն ի լոյս, խուռններս գիմեցին այլազգիք անգագար և անխնայ սուր ու նիզակ շարժելով. « ոչ խնայելով « ի պատուական ծերսն, և ոչ ողորմելով գաւառա « նման տղայոցն. որ և յահէ սրոյն զարհուրեալ « քաղաքացեանց, փախստեամբ գիմեալ յապա « ւէն իւրեանց, զոր Կլայ Մանիակայ ասէին, ոչ « եղբայր զեղբայր հոգայր, և ոչ հայր զորդին, ոչ « մայր ի դուստր զԹայր, և ոչ մերձաւոր բա « րեկամ առ սիրելի իւր նայելով. յազապ գառն « և ծանր լուսոյն այնորիկ ոչ ժամանեալ փախու « ցնելոցն այնոցիկ մօտանել յամուրն իւրեանց, « խեղճամահ եղեալ ի գուռն ամրոցին, և մե « ռան ողիք իբրեւ 2000. ուր և Պապիոսն Զուան « կաց հեղձաւ յամբոխամիջին »: Այս պապիոս ըսածն մեր Գրիգոր պատմիչին՝ էր Ուգոն արքեպիսկոպոսն Լատինաց, որ Հայոց, Յունաց և Ասորուոց արքեպիսկոպոսաց հետ ժողովրդեան յորդոր կու տար և կ'առաջնորդէր այլազգեաց գէժ զնելու. մէկաներն կըրցան ազատիլ, ինքն հօն խաչով և զէնքով ոտնակոխ եղաւ: Այս միջոցիս

1 Ոմանք ի ժամանակակցաց՝ մեռնողն ազահութեան պատիփ կը սեպեն այսպիսի մահը:

ոմանք յաջողեցան քաղքին դուռ մը բանալ և փախչել, որոցմէ եղաւ ճոսլին ալ՝ վաճառականի զգեստ հագած։ Զանկի իբրեւ բաւական սեպեղով եղած կոտորածը՝ հրաման կարգաց որ գաղբին զօրքն՝ այլ երբ քրիստոնէայք ալ դարձեցան իրենց խուճապէն՝ Փռանկները բռնել և սպաննել տուաւ, կնիկներն և զաւկրներն գերի տանել, մէկաբերը թողուլ։ Այսպէս ալ ըրաւ բերդին մէջ ամրացողներուն։ որոց ջուրն հասնելով՝ ճարերնին ալ հատաւ, և կամաւ սկամայ բացին գուռը, և հօս ալ ոմանք կեանքերնին ազատեցին։ բայց զոմանս ալ անողորմ և անիրաւ այլազգիք չարաչար մահուամբ սպաննեցին, կամ նետահայր ընելով, կամ մորթերնին հանելով, և անոնց արեամբ լուսացուելով։ Յետոյ եկեղեցեաց աշտարակներէն իրենց կուրանին քարոզք կարգաւով հանգչեցան։

Սակայն մեծ գոթադուլութեամբ Արեւիոյ վճռանքն և ցաւն ասով չմընցաւ. այլ իր անզգաստ տէրն և անոր նմանակիցն՝ աւելի մեծ վտանգ և կորուստ հասուցին, և բոլորովին փճացուցին իրենց հարց և հին տիրողաց աշխատանքը, և մանաւանդ խեղճ բնակիչները։ Վասն զի յաջորդ տարին Զանկի գաւառաւորութեամբ սպանուեր էր, և իր որդին և յաջորդն Նուրէտտին՝ ուրիշ կողմ էր. Արեւսացիք տեսնելով որ քաղքին մէջ շատ պահապան չկայ՝ իմաց տուին ճոսլինի, որ իր մըտերմին Պաղտինի քով գացեր էր, և զսա ալ յորդորելով հետն առաւ, և քիչ մարդով եկաւ մըտաւ յԱրեւսիս։ Թուրքք քաղքին երկու բերդերը քաշուեցան և սպասեցին, ինչուան որ Նուրէտտին հասաւ. հիմայ տառապեալ քաղաքացիք երկու կողմէն սուրի մէջ մնալով՝ յուսահատաբար ուղեցին մահուան մէջ ճամբայ բանալ. քաղքին գուռը բացին, և կուրորէն Նուրէտտինի բանակը ձեռքէլ անցնել կամ հօն մեռնել փորձեցին. և յիրաւի ոմանք կըրցան ազատել, որոց հետ չարեացապարտ ճոսլինն ալ, այլ շատերն՝ առջնէն աւելի չարաչար կոտորուեցան. անոնց հետ անհետացաւ Պաղտին իշխանն ալ, Սարաշոյ և Քեսնոյ տէրն, որ թէ և ճոսլընի պէս անխոհեմ, այլ աւելի կարիճ և սիրելի անձ էր, և իր վեհանախութիւն ու առատաձեռնութեամբ իր երիտասարդական պակասութիւնները կը ծածկէր։ Քեսնոյ Հայ արքեպիսկոպոսն Բարսեղ՝ որ անոր խոստովանահայր և խրատուուն էր և շատ ալ կը սիրէր, շատ յորդորէր էր զնա՝ որ մտիկ չընէ ճոսլէնի և չերթայ այն անզգոյ ձեռնարկութեան։ « Բա՛ւ զու՛մ անգամ զեկուցաք, կ'ըսէ, ոչ գնալ զան. գառնալի զճանապարհն զայն. և ոչ անսաց բա. նից մերոց, զորոյ առեալ էր զփորձ. անլուր զը. տաւ յայսմ ամենայնի. ուստի և մէք իսկ գու. չակէտք զկորուստ առաջի նորա՝ բազում ան. դամ, թէպէտ և ցաւ էր մեզ և գոթուարին էր զայն ասել նմա... եթէ փոքր մի անսացեալ էր նորա մեզ՝ կենդանի էր այժմ հոգւով և մար. մնով... »։ Բարսեղ ողբալով զմահ իր սիրե-

լոյն՝ զօր Սիրի Պաղտին կոչէ, իրեն ալ մեզի ալ մխիթարանք կը թողու. անոր հայասիրութիւնն և հայերէն խօսիլը, և գոնէ քաջութեամբ կուրիչն ու կուռէլ տալն այն վերջին օրը. յորում՝ « Մար. զէր զօրսն ամենայն, յորդորէր, սրտապնդէր, քաջալերէր. իբրեւ ըմբիշ արի և զքաջ նահա. տակս շուրջանակի զօրացն անցանէր, ուժգին և ահագին ձայնիւ ամրացուցանէր զօրսն ամե. նայն. ձայնէր առ ամենեւեան յանուանէ զա. նուն քաջութեան. Վա՛շ, ով քաջք, վա՛շ բազ. գին, և աւուրս շնորհի. որ աստ նահատակի փոքր մի և յաղթէ. մի զանգիտէք ի նոցանէ. ահա օր հանգիսի, և մահ երանելի՝ վասն Քրիս. տոսի ի վերայ քրիստոնէից մեռանել։ Եւ իբրեւ այսպէս զօրացուցանէր և հաստատէր զարտա. քոյ կողմանս բանակին, գարձեալ ի միջոց անդ զօրացն մտանէր. զլքեալն երկիրւղիւ և զխու. սափեալն թագստեամբ՝ յառաջ քարշէր, և զքաջասիրտսն գովէր. զի բաց ընկեցեալ զէնս անարի արանցն, կամ որք ունէին կարկամեալ ջամաքեալ ձեռս, յափշտակէր կորզէր և ա. ըրացելոցն մատուցանէր ի ձեռնին. ոմանց տայր, յոմանց առնոյր։ Եւ գարձեալ առիւծաբար խորխտանգ յայլ վայրս հասանէր՝ ահաւոր գոմամբ և բարձրաձից աղաղակաւ. զգիշերն ողջոյն և զաիւն ամենայն ընդր զմիջոց բանակին. զի ոչ ունէին պարապէր զայլ ուրուք լսել ըզ. ձայն քաջութեան, կամ ակն տեսանել զարագ. ընթաց սլացումն՝ հաւասար և նման Սիրի Պաղտինին. մինչև պակասեալ հատաւ ի ձայնէ, և ի բնական ուժոյն զօրութեանէ՝, հանդերձ երկվարան. և ժանգանալ կարմրութեամբ գո. լորչեաց սրտին՝ ի սանձապատ զրահից բերա. նոյ նորա, որպէս ասի յոմանց »։ Այս բանս մէջ բերինք՝ ոչ միայն իբրեւ Արեւսիոյ մեծ գի. պուռածին գրուագ մը, այլ, և այս ժամանակին մեր մատենագրութեան ճաշակ մը. որովհետեւ Դամբանական գրուածի և ողբոյ՝ մեր ձեռքը հասած մէկ հատիկ մնացեալ ազգային ճառն է, այս Բարսեղ վարդապետիս գրածն ի սիրելին իւր Սիրի Պաղտին. « Սիրեալք զնա, կ'ըսէ հոգեւորական ի որով, որպէս օրէն է ծառայից Աստուծոյ, ըստ սրում և նա զմեզ. և զկնի մահուան նորա հարկ էր մեզ փոխանակ անչափ սիրոյ նորա՝ հաստու. ցանեւ սէր կորուսելոյն ի կենաց աստի »։ Սիրոյն հաւասար է ցաւն ալ այնպէս անյայտ մեռնելուն և կորսուելուն վրայ, որով անյիշատակ մնաց ուրիշներէ. յետ այնպիսի անհանգարտ ե. ռանգուն երիտասարդութեան մը. « Ի կենդանու. թեան իւրում ոչ հանգեաւ, ոչ վայելեաց ի սմա. այլ ի տղայական տիոց սկսեալ ի տագ. նապի, ի ցնորս և ի տառապանս անցոյց զժա. մանակն մանկութեան իւրոյ. ի գիւհաց, ի թըշ. նամեաց և ի խտերախ մարմնական տերանց և ի գաւառաւոր ընկերակից իշխանաց. և այժմ ի հատարածի կենաց իւրոց՝ կորեաւ անյիշա. տակ. ցնեցաւ բարձաւ անուն նորա և սէր՝ յա. մենայն աշխարհէ և ի սրտէ, ընտանեաց և օտաւ. րաց։ Զայս ամենայն գառն և անհնարին կո. րուստ՝ յորժամ տեսանեմ հասեալ ի վերայ նորա, հեղձամղձուկ եղեալ ցնդիմ յարտասուս, »

1 Վարդան Պատմիչ շփոթելով զՊաղտին՝ Զօսլին կոչէ, Բարսեղի տեղ ալ Գեորգ կոչէ զողբասաց խոստովանահայրն. կրնար Գեորգ մ'ալ ողբալ զճոսլին, բայց նոյն իսկ Վարդանայ Հայաստանի կոչելն զսպանեալն, և 70 օր Արեւսիոյ տիրելն վերջը սպանուիլն՝ կ'իմացընէ որ Պաղտինի համար է ըսածն։

1 Եօթնակին. ի բնութի ուժոյն զօրութեամբ։

« և ոչ գիտեմ զինչ արարից, և կամ որպէս օգ-
նեցից ձեռն կարկառելով: ցաւակից մեզ յայ-
սոսիկ յԱստուած ապուինեալ վատահասցայ, որ
« միայն է անոխակալ և մարդասէր...: Եւ գրե-
« ցաք զայս գիր խոստովանութեան և աղերսի՝ ի
« գիմաց նորա և մեր. և ոչ դադարեմք յարա-
« ժամ գոչել այսու յամենայն տեղիս՝ առաջի ո-
« ղորմած հզօրին, որ բարկացաւ նմա և մեզ,
« հաշտեսցի ողորմութեամբն իւրով, և յայա-
« նեսցէ զնա մեռեալ կամ կենդանի »:

Կը շարունակուի:

ԼՃԱԿԻՍ ԶԿՆՈՐՍԸ

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՈՒՑ ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹՅՈՒՆՔ

(Տես երես 331:)

Այսպէս կ'անցնին ստէպամառուտն գի-
շերային ժամք այս զբօսասէր ընթերակ
ժողովրդեան: Եւ ես այսպիսի տեսարանի
մը հանդիսակից ըլլալու երկրորդ օրն էր
որ ծեր ձկնորսս նորէն տեսնելու առիթ
ունեցայ: Խնդճը, վշտին ծանրութենէն
կերպարանքը փոխուած՝ գրեթէ անճանա-
չելի եղած էր:

— Դոնի, ըսի, վիշտը քեզի շատ գէշ
ըրեր է. բայց սիրտ ընելու ես:

— Գիտեմ, պատասխանեց, բայց ու-
նայն է. շատ անգամ տէր չենք մեզի, և
որչափ ալ հասկընանք որ զմեզ բոլորովին
ցաւին ձեռքը թողլու չենք, չըլլար. բնու-
թիւնը կը զգայ և իր տխրութեան միջոցը
կը պահանջէ:

— Ստոյգ է, ըսի, որ բնութիւնը իր
տխրութեան միջոցը կը պահանջէ, բայց
այնպէս ընելու է որ մարդուն վրայ բոլո-
րովին չտիրանայ: Ելլեմն ալ դիտմամբ
տեսարանաց զբօսանքը խնդրելու է, ինչ-
պէս այս գիշերուանս տեսարանն էր: Հան-
դիսակից եղար արդեօք դու ալ երէկ գիշեր-
քեզի աղէկ ընելու էր այն տեսարանը:

— Է՛հ, ոչ. այդ բանը և ոչ իսկ մտքէս
անցաւ: Հեռուանց տեսայ այն լուսաւո-
րութիւնը, բայց միաբս շատ զբաղեալ էր
որ ուշադրութիւն կարենայի ընել:

— Բայց և այնպէս ջանալու ես միտքդ
զբօսանքով ալ զբաղեցնել:

— Այո, եթէ չունենայի առօրեայ ան-
հրաժեշտ զբօսանք մը՝ հացկիս մտածու-
թիւնը, զոր հազիւ կը բաւէ ժամանակը
ձեռք բերելու:

— Խնդճ, ըսի, գիտեմ որ այդ քու մե-
ծագոյն հոգդ է. բայց կ'ուզէի զբեղ աւելի

մխիթարեալ տեսնալ: Անոր համար կը
համարէի թէ դու ալ միտքդ զբաղեցնելու
համար այն բազմութեանը մէջ գնացած
խառնուած ըլլաս, որ ջրանցքին եզերքնե-
րը շարուած՝ հանդիսին անցքը կը դիտէին:

— Է՛հ, չէ. ալ այս աշխարհը և իր զուար-
ճութիւններն ինծի պէս վշտացեալ և աղ-
քատ ողորմելաց համար չէ. հապա ա-
նոնց համար է որ ամենեւին հոգ չունենա-
լով ժամանակին ինչպէս սպաննել չեն
գիտեր:

Եւ յիրաւի, այն անհոգ բազմութեան ու-
րախութեան ու ցնծումի ատեն, ո՞ գիտէ որ-
չափ ողորմելիք հացազուրկ և անօթի, ցա-
ւոց անկիւն մը փռուած, զուր տեղ տխուր
քնոյ մը մոռացութիւնը կը խնդրէին, մինչ
դեռ արտաքուստ աշխարհք պարուց ու
եղանակաց զուարթութեամբը կը յիմա-
րէր: Անգին դրամ մըն էր որ վայրկեան-
կան զբօսանքի մը համար կը շուայլուէր:
մինչդեռ անտերունչ մարդոց վիշտը կրնար
դարմանել:

— Յիրաւի, Դոնի, ըսի դարձեալ ձկնոր-
սին. քիչ մը լաւ մտածող մարդը կը տեսնէ
որ այն ունայն զբօսասիրութեան նետուած
դրամը կրնար մեծ բարիք ընել պատեհ
կարօտութեանց գործածուելով:

— Այո, և ո՞րչափ հացազուրկ ողորմե-
լիք կան որ եթէ այն շուայլեալ գրամին ոչ-
ինչ մաս մը ունենային, խնդութենէն բո-
լոր աշխարհն իրենց կ'ըլլար: Բայց թո-
ղունք այդ պահանջը. գոնէ փափաքելի էր
որ այդ հանդիսից ծախքերը անինչ տնան-
կաց վրայ չծանրանային:

Աչքերս բացի զարմացմամբ.

— Ի՞նչպէս կարելի է, ըսի, որ այդ հան-
դէսը անինչ աղքատին վրայ ալ ծանրա-
նան:

— Մի զարմանար, ըսաւ ծերը. ամենքս
ալ մէկ քաղաքի մը քաղաքացի ենք. չկայ
հասարակաց ծանրութիւն մը որուն ամենը
ըստ իրենց բաւականութեան բաժանորդ
չըլլան: Կը տեսնես ստէպ որ հասարակաց
չէնք մը կը շինուի. նոյն շէնքին որմերը
բարձրանալ չեն կրնար, մինչև որ իւրա-
քանչիւր քաղաքացին իր լուսնայն անոնց
հիմանցը վրայ չենտէ: Այսպէս նաեւ իւրա-
քանչիւր հասարակաց հանդէս ալ չկատա-
րուիր, մինչև որ առհասարակ հարուստ և
աղքատ քաղաքացի իր գրամիկը չնուիրէ:

— Ուրեմն, ըսի, դո՞ւ ալ պարտական
ես հասարակաց ծախուց բաժանակից ըլլա-
լու:

— Այո, ես ալ, ինչպէս ինծիմէն ալ ոչ